

Կ Ա Ր Գ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական ծառայողների /այսուհետ՝ դատական ծառայողներ/ վերապատրաստման հետ կապված հարաբերությունները:

2. Դատական ծառայողների վերապատրաստումը նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումն է՝ գիտելիքների բարձրացման, գործնական հմտությունների ձեռքբերման և զարգացման, ինչպես նաև աշխատանքի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ոլորտների ուսումնասիրության միջոցով:

3. Դատական ծառայողների վերապատրաստումն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

4. Վերապատրաստման ընթացքում դատական ծառայողն ազատվում է ծառայողական պարտականությունների կատարումից՝ դատական ծառայության իր զբաղեցրած պաշտոնի, ստաժի և վարձատրության պահպանմամբ:

2. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

5. Դատական ծառայողները պարտադիր վերապատրաստում են անցնում երեք տարին մեկ անգամ:

6. Պարտադիր վերապատրաստումը ներառում է դասընթացներ /առնվազն 30 ժամ/ և գնահատում:

7. Բացի եռամյա վերապատրաստումից, դատական ծառայողները վերապատրաստվում են նաև հետևյալ դեպքերում՝

ա/ «Դատական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 26-րդ հոդվածի 8-րդ մասում նշված դեպքում,

բ/ դատական ծառայության տվյալ պաշտոնի անձնագիրը փոփոխվելու դեպքում,

գ/ դատական ծառայության այլ պաշտոնի տեղափոխվելու դեպքում,

դ/ առաջին անգամ դատական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում:

8. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված վերապատրաստումն անցկացվում է յուրաքանչյուր տարի:

9. Դատական ծառայողների վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

10. Դատական ծառայողների վերապատրաստման գործընթացը կանոնակարգում, կազմակերպում և համակարգում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտը՝ /այսուհետ՝ Դատական դեպարտամենտ/ «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

11. Դատական դեպարտամենտը կարող է կազմակերպել դատական ծառայողների վերապատրաստումը Հայաստանի Հանրապետության դատական դպրոցի միջոցով:

12. Վերապատրաստումների միջև ընկած ժամանակաշրջանում վերապատրաստման հատուկ դասընթացների անցկացման դեպքում /համակարգչային, հաշվապահական և այլն/ այդ դասընթացները կարող են հաշվառվել դատական ծառայողի ընդհանուր վերապատրաստման ժամաքանակում:

3. ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

13. Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները յուրաքանչյուր տարի մինչև հուլիսի 1-ը դատական ծառայողների վերապատրաստման հայտ են ներկայացնում Դատական դեպարտամենտի ղեկավարին իրենց ստորաբաժանումներում վերապատրաստման ենթակա դատական ծառայողների մասին:

14. Ստացված հայտերի հիման վրա Դատական դեպարտամենտի ղեկավարը կազմում է դատական ծառայողների վերապատրաստման ընդհանուր ժամանակացույց:

15. Դատական ծառայողները վերապատրաստման դասընթացներ են անցնում ըստ Վերապատրաստման ընդհանուր ժամանակացույցում նշված խմբերի: Խմբերում կարող են ընդգրկվել ոչ ավել քան 20 դատական ծառայող:

16. Վերապատրաստման դասընթացներին դատական ծառայողների խմբերում անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կարող է կատարել Դատական դեպարտամենտի ղեկավարը:

17. Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներին և առանձնացված ստորաբաժանումներին վերաբերվող ժամանակացույցի հատվածը Դատական դեպարտամենտի ղեկավարը տրամադրում է համապատասխան ստորաբաժանման ղեկավարին՝ ոչ ուշ քան դասընթացները սկսվելուց 20 օր առաջ:

18. Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները, դասընթացների ժամանակացույցին համապատասխան, ապահովում են դատական ծառայողների ներկայությունը վերապատրաստման դասընթացներին:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

19. Դատական ծառայողների վերապատրաստումն իրականացվում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի /այսուհետ՝ Գերագույն դատարանի նախագահ/ կողմից հաստատված Տարեկան ուսումնական ծրագրով, որը բացառիկ դեպքերում կարող է փոփոխվել:

20. Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները ներկայացնում են առաջարկություններ տարեկան ուսումնական ծրագրի վերաբերյալ:

21. Դատական դեպարտամենտը ամփոփում է ստացված առաջարկությունները, ինչպես նաև հաշվի առնելով արդի պահանջները կազմում է Տարեկան ուսումնական ծրագիր:

22. Տարեկան ուսումնական ծրագիրը մշակվում է յուրաքանչյուր դատական ծառայողի պաշտոնի անձնագրի պահանջներին համապատասխան:

23. Տարեկան ուսումնական ծրագիրը Դատական դեպարտամենտի ղեկավարը ներկայացնում է Գերագույն դատարանի նախագահի հաստատմանը:

24. Հաստատված տարեկան ուսումնական ծրագիրն ուղարկվում է Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին:

5. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՅՆԱԿԱՐԳԸ

25. Վերապատրաստման դասընթացների ավարտին կատարվում է դատական ծառայողների գիտելիքների և ունակությունների գնահատում:

26. Դատական ծառայողների վերապատրաստման արդյունքների գնահատումը կատարում է քննական հանձնաժողովը:

27. Քննական հանձնաժողովը բաղկացած է առավելագույնը 5 անդամից:

28. Քննական հանձնաժողովի կազմը նշանակում է Գերագույն դատարանի նախագահը:

29. Քննական հանձնաժողովի նախագահին նշանակում է Գերագույն դատարանի նախագահը՝ հանձնաժողովի անդամների կազմից:

30. Քննական հանձնաժողովի որոշումները կայացվում են քննական հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

31. Գնահատումը կատարվում է միայն մատուցված վերապատրաստման նյութի շրջանակներում՝ թեսթային, բանավոր քննության կամ այլ եղանակով: Գնահատման եղանակն ըստ ոլորտների և գնահատման օրը որոշում է քննական հանձնաժողովը:

32. Թեստերը կազմում է Դատական դեպարտամենտը մինչև վերապատրաստման դասընթացների սկիզբը: Թեստերը հաստատվում են Գերագույն դատարանի նախագահի կողմից:

33. Վերապատրաստման հատուկ դասընթացների /համակարգչային, հաշվապահական և այլն/ արդյունքների գնահատումը կատարվում է ընդհանուր կարգով:

6. ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

34. Դատական ծառայողների վերապատրաստման գնահատումը կատարվում է եռաստիճան համակարգով: Քննական հանձնաժողովը դատական ծառայողին վերապատրաստման գնահատման արդյունքում տալիս է հետևյալ եզրակացություններից մեկը՝

ա/ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

բ/ զբաղեցրած պաշտոնին համապատասխանում է մասամբ.

գ/ չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

35. Դրական են համարվում 34-րդ կետի ա/ և բ/ ենթակետերում նշված քննական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները:

36. Վերապատրաստման արդյունքում քննական հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած դատական ծառայողին տրվում է ավարտական վկայական /այսուհետ՝ Վկայական/:

37. Վերապատրաստման արդյունքում ստացված Վկայականի պատճենը կցվում է դատական ծառայողի անձնական գործին:

38. Քննական հանձնաժողովի կողմից վերապատրաստման արդյունքում զբաղեցրած պաշտոնին մասամբ համապատասխանելու եզրակացության դեպքում, դատական ծառայողը Դատական դեպարտամենտի ղեկավարի որոշմամբ կարող է վերապատրաստվել հաջորդ տարվա դասընթացին:

39. Բացասական գնահատական ստացած դատական ծառայողն ազատվում է զբաղեցրած պաշտոնից՝ Օրենքով սահմանված կարգով:

40. Բացասական գնահատական ստացած դատական ծառայողին Դատական դեպարտամենտի կողմից տրվում է տեղեկանք՝ ունկնդրած ծրագրերի ծավալի և բովանդակության վերաբերյալ:

7. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ

ՉՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

41. Վերապատրաստման դասընթացներին ավելի քան մեկ երրորդին դատական ծառայողի անհարգելի բացակայության դեպքում, առանց գնահատման վերապատրաստման արդյունքը գնահատվում է բացասական:

42. Վերապատրաստման դասընթացներին կեսից ավելիին դատական ծառայողի հարգելի բացակայության դեպքում /հիվանդություն և այլն/ նրան հնարավորություն է տրվում մասնակցելու նույն ծրագրի հաջորդ դասընթացներից որևէ մեկին:

43. Դատական ծառայողների վերապատրաստման ժամանակ Դատական դեպարտամենտի կողմից վարվում են վերապատրաստվողների հաճախելիության մատյաններ, որտեղ վերապատրաստման դասընթացի յուրաքանչյուր օրվա համար նշվում է վերապատրաստվողի ներկա կամ բացակա լինելը և հաշվարկվում է նրանց ունկնդրած ծրագրի ժամաքանակը:

44. Վերապատրաստման արդյունքների վերաբերյալ Դատական դեպարտամենտի կողմից վարվում է հաշվառման մատյան, որտեղ նշվում է վերապատրաստված դատական ծառայողի անուն, ազգանունը, հայրանունը, զբաղեցրած պաշտոնը, վերապատրաստման ժամկետները, վերապատրաստման արդյունքում ստացված փաստաթղթի համարը:

45. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

45. Դատական ծառայողների առաջին վերապատրաստումը անցկացվում է Օրենքի 44-րդ հոդվածով սահմանված ժամկետներում:

46. Դատական ծառայողների առաջին վերապատրաստումն իրականացվում է Գերագույն դատարանի նախագահի կողմից հաստատված ծրագրով, որը հաստատվում է մինչև 2010թ.-ի մարտի 15-ը:

47. Առաջին վերապատրաստումը ներառում է առնվազն 15 ժամ դասընթացներ և գնահատում:

48. Դատական ծառայողների առաջին վերապատրաստման քննական հանձնաժողովի կազմը և քննական հանձնաժողովի նախագահին նշանակում է Գերագույն դատարանի նախագահը մինչև 2010 թ.-ի մարտի 15-ը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 դատարանների նախագահների խորհրդի
 2010թ. մարտի 9 -ի թիվ 02-Լ որոշման

Հ Ա Յ Տ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Պաշտոնների խմբերը	Պաշտոնը	Այլ նշումներ
	Ընդամենը			

**Պաշտոնատար անձի պաշտոնը,
 անունը, ազգանունը,
 ստորագրություն,
 ամսաթիվ,
 Կ.Տ.**